№ 117 Յուլիսի 9 (21) 1880 Յուլիսի 9 (21) № 117

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ,

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ոտցի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանայք-բժիշկներ.— Ներքին տեսութիւն, վերջին խօսք Ց. Նազարեանցին, Ներքին լուրեր։ —Արտաքին տեսութիւն. Ֆրանսիա։—Մաքսակիր հեռագիրներ։—Հայտարարութիւններ։—Ռանսիրական. Զարաբաղի թեմը և նրա կալուածական խնդիրը։

ԿԱՆԱՅՔ-ԲԺՇԿՆԵՐ

Ռուսաց պաշտօնական լրագիրը հաղորդում է որ կանայք, որոնք բժշկութեան ուսում են վերջացնում Ս. Պետերբուրգում հիմնված բժշկական իգական դպրոցում, իրաւունք են ստանում բժշկական պրակտիկա ունենալ։ Նրանք ստանում են կառավարութիւնից սահմանված մի առանձին նշան, որ կրելու են կուրծքի վրա և որ նրանց պրակտիկայի իրաւունք է տալիս։

Ուրեմն մենք կունենանք Ռուսաստանում կանայք բժիշկներ։ Դարձեալ մի նոր ասպարէզ է բացվում կանանց անկախ աշխատանքի համար։

Բայց մեր հայ օրիորդները օգուտ կը քաղե՞ն արդեօք այդ նոր և գեղեցիկ ասպարիզից։ Մինչև այժմ ոչ մի հայ աղջիկ չը կայ Ս. Պետերբուրգի իգական բժշկական դպրոցում։

Մեր հայ օրիորդները երբ անկախ աշխատանքով են կամենում ապրել, ընտրում են իրանց համար անպատճառ վարժուհու պարապմունքը։ Նրանք կարծում են, երևի, որ ուրիշ որ և է անկախ աշխատանք վայել չէ հայ կանանց համար։

Մի՞թէ մեր օրիորդները դեռ նախապաշարմունքներ ունեն։ Ոչ, մեր կարծիքով, եթէ մեր օրիորդները փախչում են իգական անկախ պարապմունքներից, այդ նախապաշարմունքի պատճառով չէ, այլ այն պատճառով է, որ մեր օրիորդները անպատրաստ են մի հոգ և այն ես ոչ թէ մի այնպիսի հոգ, որ ընդունակ լինի միայն երկրագործութեան, այլ մի այնպիսի կալուած, որ պարունակում է իր մէջ բացի ամեն պարարտ վարելահողերից և անգին կուսական անտառներ, հանքեր, հանքաջրեր, արօտատեղիներ, վերջապես մի այնպիսի կալուած, որտեղ կարելի է տնտեսութեան ամեն ճիւղերով պարապելու, այն ժամանակ կը հասկացուի, թէ Զարաբաղի ազգային ուսումնարանը բոլոր Ռուսաստանի հայ ուսումնարանների մէջ ամենահարուստ է, նթէ մենք բոլորս հետաքրքրվում ենք Մուրադեան ուսումնարանի հարցով և փափագում ենք ու ջանք անում որ նրա հարստութիւնը, իբրև ազգային ժառանգութիւն, չը յափշտակվի օտարներից, ուրեմն որքան առաւել մենք պէտք է հոգանք Զարաբաղի կալուածները կորուստից ազատելու, ըստ որում Մուրատեան ուսումնարանի հարստութիւնը համեմատաբար Զարաբաղի կալուածական հարստութեան հետ, մի չնչին բան է։ Այժմ հասկանալի է թէ ինչի նոքա, որոնց ձեռքին է եղել մինչ այժմ այդ կալուածների կառավարութիւնը, այսինքն ուսումնարանի հոգաբարձութիւնը և տեղական հոգևոր իշխանութիւնը ջանացել են միշտ ծածուկ պահելու ազգից այդ անգին հարստութիւնը, չեն հրատարակել մինչ այսօր մի տող անգամ նորա մասին ազգային լրագիրներում, ոչ մի տարի ոչ մի հաշիվ չեն առել ժողովրդին, ըստ որում այլապէս նրանք իրանց կը զրկէին մի ամենաձոխ եկամուտից։ Եւ ահա չնորհիւ այդպիսի եղեռնագործութեան (այլապէս անուանել անկարելի է) ամբողջ 30 տարի ոչ թէ միայն ազգը չէ իմացել որ նա այնպիսի մի կալուածատէր է, որ եթէ փոքր ի չատէ բաբեզնութեամբ կառավարվի, կարող է առնուազն տարեկան 80 հազար բուբլի եկամուտ բերել, այլ և այդ 30 տարվայ ընթացքում խեղճ ազգրոցը ոչ թէ 80 հազար, այլ 8 հարիւր բուբլի եկամուտ անգամ չէ ստացել տարեկան։ Այդ զուտ մարդ կարելի էր ոչ թէ միայն մի ամենաբարեկարգ թեմական դպրոց պահել, այլ և Լիմիածնի ակադէմիան (և այն ժամանակ այլ ևս հարկաւորութիւն չէր լինի ուրիշ միջոցների դիմել), և ամբողջ Զարաբաղի թեմի մէջ մի տամական գեղեցիկ գիւղական դպրոցներ, սրտցից բոլորովին զուրկ է պատմական Արցախը։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, խնդիրը չատ ծանրակշիռ է, ուստի և մի քանի բացատրութիւնների կարօտ։

Այդ կալուածը որ Խոթա, Գանձասար, ս. Յակոբ, Պակի ս. Գէորգ, Ամարաս և Վանդանանց վանքերին պատկանել հողերից և անտառներից է բաղկանում մի անգին տարածութիւն, ինչպէս յիշեցինք, աւելի քան 150 հազար դեսեատին տեղ է բռնում։ Յատկացնել այդ բոլորը յիշեալ վանքերին և դարձել վանքապատկան սեպհականութիւն, սկսել կառուցանել նոր առաջնորդարան և ազգային հոգևոր դպրոց—այդ ամենը հանգուցեալ Բաղդասար մետրապոլիտին ենք պարտական։ Բաղդասար արքեպիսկոպոսը մի հասարակ և տգէտ հոգևորական էր։ Նա զուրկ չէր մինչև անգամ Էջմիածնի վարդապետներին չատերին յատուկ ախտից —կաշառակերութիւնից, բայց նա իր ստացած բոլոր փողերը, մինչև անգամ իր հայրական Հասան-Ջալալեան ցեղի սեպհականութիւնից ստացած եկամուտները նա գործ էր ածում ուսումնարանի վերայ։ Այդ հասարակ, պարզ մարդը քաջ կերպով հասկացել էր, որ ուսումնարանի զարգացումը յաւերժական պահպանելու համար, պէտք է նախ և առաջ նորան նիւթապէս ապահովացնել։ Եւ նա այդ էր հասկացածը գործով ևս կատարեց և գեղազանց բոլոր մինչ այժմ յայտնի ազգային բարերարներից։ Նա թողեց ուսումնարանին մի այնպիսի գրամագլուխ—այն ես կասկած—որ մինչև նաև է և անսպառելի և որի եկամուտով ամբողջ Արցախի թեմը կարող էր ուսումնարաններով ծաղկել։ Եւ մի այդպիսի բարերար, մի այդպիսի բարի հովիւ այսօր մոռացված է Շուշու երեսատուն։ Ժողովրդից։ Եթէ Թիֆլիսի ժողովուրդը սրբան պարտաւորութիւն է համարում տօնել ամեն տարի Լիֆենդեանցի յիշատակը 100 հազար բուբլի ընծայելու համար, որքան ուրեմն մեծ պարտաւորութիւն պիտի լինի չուշեցիների համար տօնելու Բաղդասար եպիսկոպոսի յիշատակը, ըստ որում նորա թողածը տասնապատիկ աւելի է քան Լիֆենդեանցինը։ Բայց յամեմ չուշեցիների ոչ մի տարի, ոչ մի եկեղեցում մի հոգեհանգիստ անդամ չէ կատարվել և չէ կատարվում ի յիշատակ մի այդպիսի երեսի բարերարի։ Դրա պատճառը, մեր կարծիքով, այն է, որ նրանք չուշեցիք չը գիտեն ոչինչ այդ կալուածների մասին, ըստ որում մինչ այսօր նոքա մի չուշափելի օգուտ չեն տեսել այդ կալուածներից ուսումնարանի համար և վերջինս նիւթական դրութեան կողմից միշտ ամենաթշուառ վիճակի մէջ է եղել։ Ինչպէս ըստ մեծի մասին պատահում է մեր ազգային սեպհականութիւնների հետ, նոյնպէս և Զարաբաղի ազգային կալուածները դարձել են զանազան արկածախնդիրների, առաջնորդների, կենսատարակաների և հոգաբարձուների հարստանալու մի ազբիւր։ Բաղդասար արքեպիսկոպոսի մեռնելուց յետոյ, այդ կալուածները, իբրև վանքապատկան, ընկնում են հոգևոր իշխանութեան ձեռքը։

Ներսէս կաթողիկոսը թէև չատ չէր համակրում Բաղդասարին, բայց գնահատելով նորա արած գործը, մի փոքր ժամանակ հետևում է բարեկարգել այդ կալուածները, բայց, ի հարկէ, նա անկարող էր թեմական առաջնորդների յափշտակութիւնից զերծ պահել։ Այս վերջիններից միայն Գէորգ Վեհապետեանը ասպատում է կալուածների մասին և դատաստանական կերպով հատատում է նոցա մի քանիսի վանքապատկան լինելը, ըստ որում Բաղդասարի մահից յետոյ, զանազան հայ և Թուրք բեկեր սկսել էին յափշտակել։ Ամենասատիկ հարուած այդ կալուածները ստացել են Սարգիս եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ։ Ազգային ժառանգութիւնները սրբազանի ազգականների, փոքրաբորների, իր արքանեակների և իրեն համախոհ հոգաբարձուների առատ եկամի ազբիւր էին դարձել, ուստի և ուսումնարանը թէ բարոյապէս և թէ նիւթապէս ստորացել և մի ողորմելի կերպարանք էր ընդունել։ Ցորտաթոյն և հացկատակ մարդերի մի ամբողջ խումբ իբրև գիշատիչ գազաններ թափվել էին խեղճ կալուածների վրա և անդադրապէս լափում կլանում էին։ Աստեղ կենսատարքայի քարտուղարը ուսումնարանապատկան հողի վրա այգիներ է ձգում, այնտեղ Հասան-Ջալալեանն ցեղի անդամները սեպհականացնում են իրենց զանազան անտառներ, վարելահողեր և ամբողջ տարիներ ոչ մի անգ, ոչ մի հոգաբարձու դուրս չէ գալիս, որ ցոյց տար թէ այդ հողերը պատկանում են ուսումնարանին և չեն խլեր, և երբ անցնում է 10 տարի, արդէն օրէնքի զորութեամբ յափշտակիչները դառնում են ազգային ժառանգութիւնների

Թիւնն է երբէք չը մոռանել ապագայի մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ Պ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻՆ

—

Պ. Նազարեանց։ Դուք չարաչար սխալվել էք, կարծելով որ ես կամեցել եմ ձեզ հետ պոլեմիկայով զբաղվել, ես դրա ցանկութիւնը երբէք չեմ ունեցել և չունեմ էլ։ Իմ միակ ցանկութիւնն էր՝ ցոյց տալ հասարակութեան որ զրքերի քննադատութիւնը ձեր և ձեզ նմանների գործը չէ։

1) Ես անուանել եմ տգէտ (իսկ այժմ աւելի համարձակ միեւնոյնը կանեմ) մի մարդուն, որը չիմանալով ամենահասարակ առաջերէն բառերի նշանակութիւնը, համարձակվել էր այդ լեզուի ոճի վրա դատողութիւններ անել։

2) Կարծեմ, մի մարդ, որը հրապարակապէս յայտնում է, որ իր (քննադատի) գործն է ամբողջ հայ գրականութեան ուղղութիւն տալը (տե՛ս «Մեղու» №40 «Իրիկնագրով լոյսուածը»), պէտք է կարմրի, երբ նրան ցոյց են տալի, որ նա ինքը առաջերէն բառերը չէ հասկանում, իսկ ուրիշներին մի և նոյն բառերի թարգմանութիւնը ուղղում է։ Վերջին լոյսուածում դուք ինձ ասում էք, որ դուք դրա համար չէք կարմրում։ Լաւ աշխատանք։ Ես այդ առաջուց գիտէի.....

3) Ասացէք, խնդրեմ, եթէ մի մարդ, որը (ձեր կարծիքով) իր մայրենի լեզուի կմաղքին անգամ ծանօթ չէ, կարդացել է ցոյց տալ ձեզ ձեր արած սխալ նկատողութիւնները հայերէն լեզուի վերաբերութեամբ, ինչ կը լինէր ձեր հայր, եթէ այդ պաշտանը յանձն առնէին մեր հայկաբանները....

4) Եթէ ես ասում եմ. «Պ. Ե. Նազարեանցը կաշխից դուրս է եկել իր քննադատութիւնը պաշտպանելու համար, բայց...և այլն» դրանից, յայտնի եմ, մենք չը պէտք է հասկանանք, որ Նազարեանցը իսկապէս կաշուց դուրս է եկել և առանց կաշու է մնացել։ Նմանապէս. եթէ հայրը գիտել է աղջկան և ասել է. «դու նեղրից ինչ պէտք է շինես, (կարծելով, որ նեղրին կարելի է ամեն տեսակ խաղալիք դարձնել աղջկայ ձեռքում), չը պէտք է կարծել, որ նեղրից իսկապէս կարելի է խաղալիք շինել։ Դժուար հասկանալու է, չէ՞, պ. Նազարեանց....

5) Զը գիտեմ ինչ է ուզում ասել պ. Նազարեանցը, ասելով. «մարդը ակամայ մտածում է, թէ արդեօք ինչ շարժառիթ ունէր պրոնը (այսինքն՝ ես) մի պաշտպանողի դեր յանձն առնելու»։ Այդ տեսակ կասածելի խօսքերը պատիւ չեն բերում ոչ մի ազնիւ զրողին։ Կարծես, պ. Նազարեանցին յայտնի չէ, որ Գաբ. Միրզոյեանցը այն փոքրիկ խմբի կազմողներից մէկն է (այդ կարող էր պ. Նազարեանցը գիտենալ լրագրութիւնից), որի աշխատութեանց արդիւնքների դէմ յարձակվում է մեր երեսի քննադատը։ Ասացէք, խնդրեմ, ինչ կար զարմանալու, եթէ Միրզոյեանցը այդ աշխատութիւնների պաշտպան (?) հանդիսացաւ։

6) Մենք զարմանում ենք, թէ ինչ ազդեցութիւններից յայտնի է պ. Նազարեանցին, որ կանանաւոր խմբագրական մասնաժողովը ի պատիւ օրիորդի չէ կամեցել թերատար թարգմանել այն գործը, որ ընկերութեան կազմելուց առաջ է սկսված։ Թող յայտնի լինի պ. Նազարեանցին, որ ընկերութեանը պաշտօնական յայտնված էր, որ՝ եթէ խմբագրական մասնաժողովը «Ռոմանս եղբօր տնակը» արժան չի համարի ընկերութեան հրատարակութեանց անուն կրելու, այդ դէպքում կարող է ազատվել և առանց ընկերութեան միջոցների։

Դուք, պ. Նազարեանց, զրպարտում էք մի նորակազմ ընկերութեան խմբագրական մասնաժողովի անդամներին, որոնք իրը թէ հէնց սկզբից սկսել են ումէ ինչ խաթր պահել և ի լոյս ընծայել անարժան գրքոյկ։ Այդպիսի մի բան պատիւ չը պէտք է բերէ ոչ մի ընկերութեան, որը զորձ է ածում հասարակական միջոցներ։

Արժէն արդեօք ձեր յօդուածի միւս կէսերը պատասխանել թէ ոչ, թող ուրիշները դատեն։

Զարմանքով կարդացի «Մեղու»-ի № 43-ում դէպի ինձ ուղղած մի քանի խօսքերը պ. խմբագրի կողմից։ «Մեղու»-ի պ. խմբագիրը իմ սեւ անձամբ չեմ կամենում «Մեղուի» և «Մշակ»-ի միջ կռուի նորոգելու միջոց դառնալու» խօսքերից այն եզրակացութեան է հասել, իբր թէ՝ ես ձգտել եմ խնամակալի պաշտօնին «Մեղու»-ի վրա։ Զարմանալի լոգիկա..... չէինք սպասս մ։

«Ինչ է կարծում պ. Գ. Միրզոյեանը, ասում է «Մեղուի» պ. խմբագիրը, որ և է ազնիւ և իր պատիւ ճանաչող խմբագրութիւն կը համաձայնի՞ր այդպիսի մի հոդաբարձութիւն ունենալու իր վրա.....», իսկ մենք կը գիտենք նրան հաւանալ հարցով.

«Ինչ է կարծում «Մեղու»-ի պ. խմբագիրը, որ և է ազնիւ և իր պատիւ ճանաչող հայոց լրագրի խմբագրութիւն թողլ կը տայ զանազան Նազարեանցներին իր լրագրի միջոցաւ ձգտել խնամակալի պաշտօնին ամբողջ հայոց գրականութեան վրա.....»

Գաբ. Միրզոյեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք որ Ս. Պետերբուրգի ֆրանսիական դեսպան գներալ Շանզի ճանապարհորդում է այժմ Անդրկովկասում և այս օրերս վերադառնալու է Թրիժոմ։

—

Դրիդոր Արծրունու դասախօսութիւնը «Սովը Հայաստանում թարգմանվեցաւ արդէն գերմաներէն լեզուով և չուտով կը տպվի առանձին բրոշիւրայով։

—

«Правит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է հետեւեալ Բարձրագոյն հրամանը։ Ս. Պետերբուրգի Նիկոլայեվսկայա հիւանդանոցի մէջ բժշկականութեան ուսումը աւարտող կանանց յատկացնել կուրսքի առանձնանշան անկախ պրակտիկա ունենալու իրաւունքի համար։ Այդ արծաթէ նշանի մէջ տպել դրված են Ж. և В. տառերը (женщина врачъ, բժիշկ-կին)։ Այն կանայք, որոնք բժշկականութեան դասերը լսելուց յետոյ ստացել են անկախ պրակտիկայի իրաւունք, պարտաւորվեն նրանց յատկացրած այդ նշանը կուրքի ալ կողմը կրել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները։

Կղերական կուսակցութիւնը, որի դէմ ուղղված էին մարտի 29-ի հրամանները, վճռեց, որ եղուիտներին արտաքսելու օրը այնպիսի օր դարձնի, որի «անցքերին» մասին խօսի և դատողութիւններ տայ ամբողջ Եւրոպան։ Այդ կուսակցութիւնը եղուիտներին արտաքսելու անցքը այնպիսի ձեւերով շրջապատեց, որ Ֆրէյսինէի մինիստրութեան բոլոր աշխատանքները՝ իր վճռքը առանց ազմկի իրագործելու մասին՝ իզուր անցան։ Կղերականները հասան իրանց նպատակին։ Այժմ ամբողջ Եւրոպայի իւրաքանչիւր անկիւնում խօսում են եղուիտների մասին, այսինքն այն եղբայրութեան մասին, որ միշտ հակակրելի է եղել Եւրոպական հասարակութեան փոքր ի շատէ զարգացած մասի համար։ Խօսելը բաւական չէ, այդ հասարակութեան անվստահութիւն տարածելով ժողովրդի մէջ, ամենայն կերպով բարեկարգէր ուսումնարանը և վերականգնէր այդ վստահութիւնը։

Արիստակէս վարդապետը իր եկած օրից սկսել է ուշադրութիւն դարձնել կալուածական խնդրի վրա և յաջողել է շատ բան անելու, բայց այդու ամենայնիւ իր բոլոր աշխատութիւնը կալուածների մասին կարելի է ասել բոլորովին ապարդիւն են անցել։ Նա աշխատել է համոզել հոգաբարձուներին, որ այդ կալուածները յափշտակութիւնից պահպանելու և նոցա չափերը դատաստանի առաջ պաշտպանելու համար, ուսումնարանը պէտք է ունենայ մի օրինաւոր փաստաբան և նշանակել է տուել երբեւեալ փաստաբան պ. Ակարոնեանին տարեկան 1500 բուլլ ռոճիկով, բայց մեր պարտ երգուեալ փաստաբանը ամա ամբողջ 4 տարի ուսելով ամբողջ հարիւրաւոր թղթաձա հայ որդոյրի և ազգասերների փողը և ամենայարմար առիթում հասկացնել տալով հոգաբարձութեան թէ նա այդ (փողակերութիւնը) անում է միայն դրված լինելով ազգասիրական զգացմունքից, ոչինչ մի երեւելի բան չէ յառաջացրել կալուածների վերաբերմամբ և նոյն իսկ այս քանի օրերս, երբ հոգաբարձութիւնը հեռագրում է նորան Գանձակ, որ շտապէ գալ, ըստ որում այժմ երկրաշարժ եկած լինելով, ամենակրիտիկական վայրկեանն է, նա, այդ ազգասէր հայ երիտասարդը, հրաժարվում է գալուց, անձնական շտապ գործունէա ունենալու պատճառով.... Երեկ պ. Ակարոնեան մտածում է, ինչ կայ, ես ևս ազգի որդին եմ, ամենքը ուսում են, ինչ կը լինի մի 6 տարար ևս ես ուսեմ։ Ես այդ մարդը, նկատել պէտք է, դեռ ազնիւ փաստաբաններից մինն է համարվում..... Փաստաբան նշանակելուց յետոյ, Սեղբակեանը հոգաբարձուների մատնացոյց լինելով, նշանակում է պ. Դանիէլբէկեանին կալուածների ընդհանուր կառավարիչ, բաւականին մեծ ռոճիկ տալով նորան և բոլորովին հաւատալով հոգաբարձուների վկայութիւնն նորա ազնուական մասին, թէև հոգաբարձուները քաջ գիտէին, որ մի արտաքսված պրոֆեսսոր, որպիսին էր պ. Դանիէլբէկեանն, չէր կարող յարմար լինել, բայց մի տարուց յետոյ, այդ կառավարիչը բոլոր ռոճիկը լրիվին ստանալով, միայն 700 բուլլ եկամուտ է ցոյց տալիս, այն ևս ոչ թէ բոլորը ուրիշ աղբիւրից հոգևոր զրպոցները։ Ուստի և հնչում է հասկանալ, որ Ղարաբաղի առաջնորդներից միայն նա կարող է ազնիւ և նշմարիտ ազգասէր կոչվել, ով որ իր բոլոր ուշադրութիւնը կը դարձնի կալուածների, նոցա բարեկարգութեան վրա և կաշխատէ յափշտակված ազգային ժառանգութիւնները յետ ստանալ, ուրեմն ապահովագրելով ընդ միշտ ուսումնարանի նիւթական դրութիւնը, միջոց կը տայ սորան բարոյապէս ևս ծաղկել և ժողովրդան պահանջներին համապատասխան ազգային-գործիչներ պատրաստել։ Հաստատած իրողութիւն է, որ Շուշու հոգևոր զրպոցը իր երկարամեայ գոյութեան միջոցին ոչ մի հասարակական գործիչ, ոչ մի օրինաւոր քահանայ և ոչ մի փոքր ի շատէ օրինաւոր ուսուցիչ չէ տուել ոչ քաղաքին և ոչ վիճակին, թէև անգամն գումարներ են փչացել և դրա պատճառը, գլխաւորապէս, այն հանգամանքն է եղել, որ ուսումնարանը մի յայտնի, որոշ եկամուտի աղբիւր չունեցողով (ըստ որում կալուածները վերևում նկարագրված գրութեան մէջ են եղել), իր գոյութեամբ պարտական է եղել միշտ տեղական առաջնորդների կամքին։ Ուրեմն ուսումնարանի գոյութիւնը ամբողջապէս կախված է նորանից թէ ինչ տեսակ մարդ է առաջնորդը, որովհետև հոգաբարձութիւնը մինչև այսօր աւելի վնաս է տուել, քան օգուտ։ Արդարութիւնը պահանջում է խստանվանելու, որ Ղարաբաղի այժմեան առաջնորդ Սեղբակեան վարդապետը այդ կողմից գովասանութեան արժանի է և իր բոլոր նախորդներից անենաորդունեան և անչափապէս է հանդիսացել, բայց այդ ևս միայն համեմատաբար։ Ճշմարիտ է, որ եթէ այսօր հոգեւոր զրպոցը, մանաւանդ օրիորդանց սկսում են բարեկարգ ուսումնարանների կերպարանք ստանալ, եթէ այսօր (սեպտ. 1-ից)՝ կարելի է լինում տղայոց հինգերորդ, իսկ օրիորդաց չորրորդ դասարան բանալ, եթէ այսօր ուսումնարանը կարդանում է Սեղրակ Մանդինեանցի պէս մանկավարժ-մասնագէտը իրեն տեսուչ ունենալ գա, ըստ պետի աչխատութեան, թէև ուեւաչնում ենք, Ամբիսակէս վարդապետի նոյն իսկ պատիւը և չաջը պահանջում էին, որ նա, հրաժարեցնելով Պապաջանեանին և նորա խումբը, և գժտութիւն ձգելով մեր մէջ, ոչ մի հոգեւոր զրպոցներ չունենալ, ինչպէս ասում է Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը «Սովը Հայաստանում թարգմանվեցաւ արդէն գերմաներէն լեզուով և չուտով կը տպվի առանձին բրոշիւրայով։

—

«Правит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է հետեւեալ Բարձրագոյն հրամանը։ Ս. Պետերբուրգի Նիկոլայեվսկայա հիւանդանոցի մէջ բժշկականութեան ուսումը աւարտող կանանց յատկացնել կուրսքի առանձնանշան անկախ պրակտիկա ունենալու իրաւունքի համար։ Այդ արծաթէ նշանի մէջ տպել դրված են Ж. և В. տառերը (женщина врачъ, բժիշկ-կին)։ Այն կանայք, որոնք բժշկականութեան դասերը լսելուց յետոյ ստացել են անկախ պրակտիկայի իրաւունք, պարտաւորվեն նրանց յատկացրած այդ նշանը կուրքի ալ կողմը կրել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները։

Կղերական կուսակցութիւնը, որի դէմ ուղղված էին մարտի 29-ի հրամանները, վճռեց, որ եղուիտներին արտաքսելու օրը այնպիսի օր դարձնի, որի «անցքերին» մասին խօսի և դատողութիւններ տայ ամբողջ Եւրոպան։ Այդ կուսակցութիւնը եղուիտներին արտաքսելու անցքը այնպիսի ձեւերով շրջապատեց, որ Ֆրէյսինէի մինիստրութեան բոլոր աշխատանքները՝ իր վճռքը առանց ազմկի իրագործելու մասին՝ իզուր անցան։ Կղերականները հասան իրանց նպատակին։ Այժմ ամբողջ Եւրոպայի իւրաքանչիւր անկիւնում խօսում են եղուիտների մասին, այսինքն այն եղբայրութեան մասին, որ միշտ հակակրելի է եղել Եւրոպական հասարակութեան փոքր ի շատէ զարգացած մասի համար։ Խօսելը բաւական չէ, այդ հասա-